

Արարս ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԵՎԵԼՔԸ ՄԱՐԻԱՄԱՍԼԱՍՍԱՉՅԱՆԻ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

1970-ական թվ Մ. Ապամազյանի ճանաշման տարիներն էին. նա շրջագայում է, ստեղծում բազմաթիվ նկարներ, արժանանում մրցանակների: Արևելքը Մ. Ապամազյանի համար հիացմունքի և ոխտազնացության աղբյուր է: Բազմաթիվ ուղևորությունները Հնդկաստան, Շապուհա, Եգիպտոս, Փղոսկրի ափ, Սաղազակար, Կոնգ կազմում են նրա ժառանգության անբաժանելի մասը: Ճանապարհորդությունների ժամանակ Մ. Ապամազյանն աշխատում է անմիջական տպագրության տակ կատարել ճնապանկարներ, որոնք արվեստանոցում վերածվելու էին կտավների: Այսպես են ծնվել նրա արևելյան կենցաղային ժանրի ստեղծագործությունները, թեմատիկ գործերը, նաև աշխատությունները: «Արևելքը ինձ զարմացնում է: Այնուղիւ պահպանվել են ազգային սովորությունները, որոնք հուզում են նկարչին իրենց անկրկնելի գունագեղությամբ», - գրել է նկարչութիւն:¹

Հնդկաստանում Մ. Ապամազյանը եղել է երեք անգամ: «Երբ 1957թ. ես գնացի Հնդկաստան տուրիստական ուղևորության, երջանկությունից գլուխս պտտվում էր: Ես չի կարող հանգստանալ և տարերքի մեջ նկարում էի՝ վախենալով բաց թողնել ինչ-որ կարևոր բան: Հնդկաստանը հրաշքների երկիր է: Այն գերում է ոչ միայն իր բանկարծեք քարերով ու մարգարիտներով, այլև զարմանափառ ժողովրդով և գեղեցիկ բնությամբ: Ամեն մի հեղինակ մեջ կարելի է տեսնել այդ հնագույն մշակույթը. սա գեղեցիկ ժողովուրդ է, որը չափազանց ճաշակով է հագնվում»:²

Հին սովորությունները, խորհրդավոր և անկրկնելի, առատ և ճիխ բնությունը, մարդն իր ամենօրյա շրջապատի մեջ. ահա այսպիսին է Հնդկաստանը Մ. Ապամազյանի ստեղծագործություններում: «Հնդկաստանը, նրա ժողովուրդը վաղուց ինձ հրապուրում էին: Ես կարդացել եմ շատ գրքեր Հնդկաստանի մասին, ուսումնասիրել Հնդկաստանում եղած նկարչների աշխատանքները: Ես ուսումնասիրել եմ հնդկական արվեստը: Սակայն իրական Հնդկաստանը գերազանցեց իմ բոլոր սպասելիքները: Նրա եռյունը դժվար է նկարագրել բառերով ու գույներով: Նա ավելի հարուստ է ու լայն»:³

Ամեն մի նկարից յուրովի է ընկալել այս հնամենի երկիրը: Ուերիխի կտավներում այն առեղծվածային է և խորհրդավոր, Չույկովը պատկերում է նրա գուսաց պոեզիան: Մ. Ապամազյանի կտավներում Հնդկաստանը ներկայանում է որպես ինձ սովորությունների և ինքնատիպ մարդկանց երկիր: Տարբեր կանացի կերպարների ցուցարակից ծնվում է կանանց նվիրված շարքը: Նրանց կյանքի, աշխատանքի, ստեղծագործության միջոցով նկարչութիւն պատմում է ողջ երկիր մասին: Գունեղ սարիներով երիտասարդ գեղեցկութիւնները, օջախի պահապան տարեց կանայք, վարպետութիւն կանայք, մանուկներին կերակրող կանայք... Նրանց ընդհանրացված կերպարներից ծնվում է Մ. Ապամազյանի Հնդկաստանը:

«Պարուին Մարդասից» (1967թ.) կտավը տուրք է հնդկական մշակույթին: Դեռահաս կիսամերկ աղջիկը ավելի շուտ հիշեցնում է ծաղիկ, արևադարձային միքք: Կտավը կսոսուցված է վաս գույներով, լրկալ քսվածքներով: Հնդկանուր առմանը, կտավը դեկորատիվ է, կոլորիտային: Այս գործի շարտնակությունը «Հնդկութիւն հյուր գնալիս» (1970թ.) կտավն է, որտեղ պատկերված կինը պատկանում է միջին դասին: Նրա մեջ նկարչութիւն տեսնում է անսահման կանացիություն, նրբագեղություն, նաև՝ գիշատիչ արտահայտություն: Դեղնավուն սարին, ոսկյա ականջօն ու ապարանջանը ամբողջացնում են կերպարը: Հնդկութիւն պատկերված է բաց ֆոնի վրա, ինչն ընդգծում է նրա դեմքի և մարմնի առողջ շագանակագույնը:

Հնդկութիւն մի այլ տիպ՝ ուսանողութիւն, կարելի է տեսնել «Ուսանողութիւն Դե-

¹ Советская культура, Ег., 17. 02. 1976.

² М. А с л а м ա զ յ ա ն, Դաւтар моей жизни, М., 1990, стр. 54.

³ Moscow News, 24.03.1972; Դ. Сарабյան, Մարիամ Աсламазյան, „Советский художник”, 1979, стр. 20.

լիից» (1970թ.) կտավում: Արևելյան դիմագծերով աղջկա ազգությունը բացահայտում են հնդկական նախշերով քարանը, քարձը, ինչպես նաև պատից կախված հնդկական դիմակը: Գույնը դարձյալ դառնում է ձևակազմից տարբ: Մուգ կապույտն ու կարմիրը հավասարակշռված են արծաթագույն երիզներով: Իսկ աղջկա ձեռքի վառ դեղին գիրքը անսպասելի երանգավորում են մոցնում կտավի մեջ: Ծիշտ է, կերպարը փոքր-ինչ կաշ-կանոված է, սակայն վառ գունաշարը նկարը դարձնում է կոլորիտային, ակտիվ:

Մ. Ասլամազյանի համար հատկապես հիշարժան եղավ 1973թ. այցելությունը Հնդկաստան, երբ արժանանալով Զ. Ներուի մրցանակին՝ նա Հնդկաստանում հանդիպեց Ինդիրա Գանդիի հետ: Մ. Ասլամազյանը մեծ հիացմունքով է նկարագրում այդ հանդիպումը. «Սենյակի դուետի մոտ կանգնած էր ոչ բարձրահասակ, շատ հմայիչ մի կին: Նա ձեռքը մեկնել էր մեզ ողջունելու: Նրա մեջ զարմանալի կերպով գուգորդվում էին կանացի նրբագեղությունը՝ տղանարդու կամային բնավորության հետ: Երբ ես հարցուեցի, թե ինչպես է նրան հաջողվել այդքան դժվար աշխատանքի հետ մնալ կանացի և գեղեցիկ, Ինդիրա Գանդին արևելյան իմաստությամբ պատասխանեց. «Գեղեցկությունը նրա աշքերում է, ով դա տեսնում է»:⁴ Վերադառնալով հայրենիք՝ Մ. Ասլամազյանը նկարում է Ինդիրա Գանդիին հոր դիմանկարի ֆոնի վրա: Նկարը ցուցադրվեց Մոսկվայում, Բոնմեյում: Մ. Ասլամազյանը 1975թ. նկարը նվիրեց Ինդիրա Գանդիին, որն այն համարեց իր ունեցած լավագույն դիմանկարներից մեկը:

Թեմատիկ ստեղծագործությունները՝ «Ծողովրդական բրուտագործուիհն» (1971թ.), «Աշխատանքային օրից հետո Զայառություն» (1971թ.) ընդհանրացված են, համարում են կենցաղային ժանրը դիմանկարի հետ: «Ծողովրդական վարպետուիհն» լավագույն գործերից է: Նկարը կառուցված է գույնի և ռիբմի գուգորդման միջոցով: Վառ լոկալ գույնները՝ նարնջագույնը, կապույտը, օխրան հաջորդում են միջնանց: Դրանց հարաբերությունը ծայրասահման սրված է, և միայն պլաստիկ ռիբմն է նկարը պահում հավասարակշռության մեջ: Նկարի հիմնական ձևը կորագիծն է: Վարպետուիտ ծալապատիկ դիրքը հիշեցնում է սափորների ձևերը: Նրա ձեռքի ապարանջանը ներդաշնակվում է սափորների զարդանախշերի միջոցով, ոտքի և սանդալի հարաբերությունը կրկնվում է ներկամանի վրա: Հնդկաստանը պատկերելիս դարձյալ Մ. Ասլամազյանը մնում է հոգեհարազատ հայի գունազգացողությանը՝ պահպանելով դեղինը, կարմիրը ու կապույտը, որոնք բխում են հայկական մանրանկարչությունից, Սինասի ստեղծագործությունների գույներանզներից:

«Հնդկաստանի կանայք» կտավը (1973թ.) մոնումենտալ ստեղծագործություն է: Կոմպոզիցիոն կառուցվածքով այն հիշեցնում է «Հայաստանը այսօր» կտավը: Կենտրոնում պատկերված է ոսկե սարիով հնդկուիհն՝ ձեռքին մանուկ, որի դեմքը թեև չի երևում, սակայն նա է «կահում» ողջ կոմպոզիցիան: Հավանաբար նրա նասին է գրել Մ. Ասլամազյանը. «Հնդկուիհն նստած էր օվկիանոսի ափին: Ինձ էին ուղղված խոշոր, քարի աշքերը, որոնք օժնված էին ներքին արժանապատվությամբ և մաքրությամբ: Նրա հազին ոսկեզույն սարի էր, ձեռքին՝ ոսկե ականջօղով մի հրաշաի մանջուկ: Նրանք կարծես լինեհն Հնդկաստանի խորիրդանիշը»:⁵ Նկարում պատկերված նյուս հնդկուիհները ևս տիպային կերպարներ են: Գույները նրբորեն հավասարակշռված են՝ դեղինը կարմիրի հետ, մանուշակագույնը՝ սպիտակի, մուգ կանաչը՝ մուգ կարմիրի հետ: Այս խայտարդես գունաշարը ամրացված է կարմրադարձնագույն և վարդագույն ֆոնով, որն իր հերքին ակտիվանում է վերին մասի լազուր կապույտով:

Հնդկական թեմաներով նատյուրմորտներում ապրում է «Հնդկաստանի մի մասնիկը, «Հնդկաստան» (1970թ.), «Նատյուրմորտ հնդկական կոշիկով» (1970թ.), «Նատյուրմորտ Հնդկական կտորով և սև խարորդով» (1973թ.): Բավկական է՝ նկարչուիհն իր ձեռքի տակ ունենա ճանապարհորդությունից բերված հուշանվեր, իր, մենք տեսնում և զգում ենք տվյալ երկրի շունչը, կիման, գույները:

Երկրորդ երկիրը, ուր այցելում է Մ. Ասլամազյանը, Եգիպտոսն էր: Դա տեղի ունեցավ 1967թ., երբ Ասուանի ջրանցքը կառուցողների հետ միասին Մ. Ասլամազյանը ուղևորվում է այսուղեղ: Ինքնարիուից զցած առաջին հայացքը վերևից կանխորշում է

⁴ Մ. Ա ս լ ա մ ա զ յ ա ն, Ց պ. աշխ., էջ 55:

⁵ Մ. Ա ս լ ա մ ա զ յ ա ն, Օ բ Ի ն դ ն ի, "Советская страна", N 8, 1987, стр. 30.

Մ. Ապամազյանի Եղիստական շարքի գունաշարը: Այդ շարքերը կատարված են տեսմակերպության կողմէն՝ պահպանապահության մեջ: Նրանք ճանապարհորդական ճեղքանկարներ են, որոնց միջոցով նկարչութիւն ուսումնասիրություն է Եղիստուուր՝ տարվա տարրեր ամիսներին, օրվա տարրեր ժամերին, նրա պատմությունը, ներկան: Նրա տեմպերային շարքերում քննությունը («Աստան զյուղի արևածագը» 1967թ.) հետզհետև վերածվում է տոր կեսօրի («Աստան զյուղը» 1967թ.), որին հաջորդում է զով երեկոն («Փողոց Լուկուրում» 1968թ.):⁶ Իր գունային հակառակություններով: Այս ստեղծագործություններում մենք չենք տեսնի արևը ուղղակիորեն, սակայն նա տիրում է ամենուրեք. «Ես հասկացա, թե ինչո՞ւ էր Եղիստացիների մոտ արևը զիսավոր աստվածություն համարվում: Ես այս երկիրը լմկալեցի որպես արևի բազավորություն: Նրա շողերի ներքո ծնվում են վառ գույներ, լույս ու ստվերի հակառակություններ»:⁷

Եղիստուի բողած տպագրությունն այնքան մեծ էր, որ նկարչութիւն ոչ միայն նկարում էր, այլև գրառումներ կատարում իր նորատեսություն. «Ես վախենում եի, որ դարերի ընթացքում Եղիստական արվեստը հղկվել է բացարձակության աստիճանի: Սակայն իմ տեսածը գերազանցեց բոլոր սպասելիքներս: Ամեն մի արվեստ իր բարձրակետում լինում է վիթխարի և պարզ միաժամանակ, ինչպես Սֆինքսն ու Քեռիսի բուրգը: Նրանց մեջ կա ձգողականություն և անհասանելիություն: Այդ իրեշը նայում է թեզ վերևից և տեսնում է ապագան: Նրա կողքին նարդը իրեն գգում է մի քրքոր: Որքան մեծ մարդիկ են անցել նրա կողքով, իսկ նա անվրդով կանգնած նայում է հավերժությանը՝ առեղծվածային ուժով»:⁸

Նկարչութիւն այցելում է Կահիրե, լինում է Մեմֆիսում, ապրում է Աստան զյուղում: Նրա համար ամենահետաքրքիրը դատնում են հանդիպումները մարդկանց հետ: Եթե կանայք սկզբում նայում են նրան կասկածամտորեն, սակայն իմանալով, թե որ երկրից է նկարչութիւն, սկսում են ժապառ և նոյնիսկ բոլոր են տալիս իրենց նկարել, ինչը այնքան էլ բնորոշ չէ տեղաբնիկներին: Եղիստական շարքի համար Մ. Ապամազյանը 1976թ. արժանանում է Համալ Արդել Նասրի անվան մրցանակի:

Նկարիչն առավել, քան որևէ արվեստագետ, մնալով իր նախասիրած գուներանգների ու թեմատիկայի սահմաններում, որպես կանոն, աննշականորեն է արձագանքում այն նոր իրականությանն ու տպագրություններին, որոնց ականատեսն է դառնում: Այդպիսին եղավ Սարիան Ապամազյանն իր արևելյան կտավերում:

ВОСТОК В КАРТИНАХ МАРИАМ АСЛАМАЗЯН

Резюме

A. Մարկարյան

Семидесятие - годы признания таланта Мариам Асламазян. Она много путешествует, открывает для себя новые страны. Воспитанная на традициях русской культуры, М. Асламазян особенно восприимчива к Востоку. Ее любовью и привязанностью становится Индия, страна с древней и самобытной культурой. С ее полотен перед нами предстают яркая тропическая природа, обычаи и быт этой древней цивилизации, и люди, красивые и гордые, мужественные и непокоренные ...

Индийским произведениям Мариам Асламазян своеобразную ноту придает ее особое отношение к Индире Ганди, с кем она неоднократно встречалась и не переставала восхищаться.

⁶ *Московский художник*, 5. 02.1976.

⁷ *М. А сл а м а з я н, Դաւтар..., стр. 108:*